ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՓԻՆԵ ՉԱՆԹԻԿՅԱՆ

ՆԵՈԹՈՄԻԶՄԸ ԺԹ-Ի ԴԱՐԵՐՈՒՄ

ԺԹ-Ի դարերում ձեւավորված փիլիսոփայական եւ գիտական նոր ուղղությունները ձգտում էին հարված հասցնել աստվածաբանությանը եւ կրոնին: Այս հանգամանքը ստիպեց կաթոլիկ աստվածաբաններին մտածելու կրոնական փիլիսոփայությունը զարգացնելու մասին: Անհրաժեշտ էր ձեւավորել մի այնպիսի համակարգ, որը ներառելով զարգացող բնագիտական եւ հումանիտար գիտությունների տվյալներն ու փաստարկները՝ կպատասխաներ ժամանակի առաջադրած հիմնահարցերին:

Դեռեւս 1870 թ. ապրիլի 21-ին Վատիկանի առաջին տիեզերաժողովն ընդունեց «Կաթոլիկյան հավատքի դավանական սահմանադրություն»-ը[1]: Վատիկանի կողմից խրախուսվող աստվածաբանները եռանդուն կերպով ձեռնամուխ եղան նեոսխոլաստիկայի մշակմանն ու տարածմանը: Սակայն բռնկվեց Ֆրանսիական պատերազմը եւ Վատիկանի տիեզերաժողովի աշխատանքները ընդհատվեցին[2]:

Լեւոն XIII պապը 1879 թ. օգոստոսի 4-ին հանդես է գալիս «Aeterni Patris» կոնդակով եւ նեոթոմիզմը հռչակում կաթոլիկության պաշտոնական փիլիսոփայություն՝ ներդաշնակ քրիստոնեական դավանաբանությանը: Այս կոնդակով Թոմա Աքվինացին հռչակվում է «կաթոլիկ ուսումնական հաստատությունների հովանավոր, մեծ մտածող եւ ուսուցիչ»[3]: Լեւոն XIII պապը կոչ է անում աստվածաբաններին ներշնչվել Թոմա Աքվինացու փիլիսոփայությունից, զարգացնել նեոթոմիզմը եւ հասնել նոր հիմնախնդիրների լուծմանը: Ըստ Չ. Կոպոլստոնի սխալ է կարծել, թե Լեւոն XIII պապն է հիմնադրել նեոթոմիզմը, այլ պետք է ընդունել, որ նա նոր եւ հզոր ազդակ հաղորդեց այս ուղղության զարգացմանը[4]: Աստվածաբանության համար թոմիզմի վերածնունդը պատմական նշանակություն ուներ, քանզի մտավոր, փիլիսոփայական այս շարժումը ուղղված էր կաթոլիկության եւ առհասարակ քրիստոնեական դավանաբանության պաշտպանությանն ու հիմնավորմանը: Այս խնդրում, ըստ Դեզիրե Մերսիեի, հենց Լեւոն XIII պապն էր, որ ճիշտ ուղղություն հաղորդեց նեոթոմիստական փիլիսոփայական համակարգին: Իսկ Էտիեն Ժիլսոնը նշում է, որ Լեւոն XIII պապը իր ժամանակի նշանավոր փիլիսոփաներից էր[5]:

«Aeterni Patris» կոնդակով կաթոլիկության առջեւ խնդիր դրվեց՝ ուսումնական հաստատություններում վերականգնել քրիստոնեական փիլիսոփայության դասավանդումը: Հետաքրքրություն է առաջանում նաեւ միջնադարյան փիլիսոփայության նկատմամբ,

1 Տե՛ս “Христианство”, том I, Москва, 1995, էջ 345:
2 Տե՛ս անդ, էջ 347:
3 **James Hastings**, Encyclopedia of Religion and Ethics, vol. 7, Edinburgh, 1964, p. 892.
4 Տե՛ս **Ф. Ч. Копелстон**, Аквинат, Москва, 1999, էջ 250:
5 Տե՛ս **Р. Радев**, Критика неотомизма, Москва, 1975, էջ 410:

գրվում են նորանոր աշխատություններ: Փիլիսոփայության պատմության համար նոր փուլ է սկսվում. ոչ միայն ձեւավորվում է նեոթոմիզմը, այլ նաեւ մշակվում են նոր սկզբունքներ ու մոտեցումներ[6]:

Պետք է նշել, որ թեեւ նեոթոմիզմը սերտորեն աղերսվում է կաթոլիկությանը, բայց ուղղակիորեն կաթոլիկ դավանաբանության մաս չի կազմում եւ բավականին արժեքավոր փիլիսոփայական համակարգ է՝ խորաթափանց հայացքներով եւ սկզբունքային դրույթներով: Նեոթոմիստ տեսաբանները մերժեցին այն թյուր կարծիքը, թե արդի գիտական առաջընթացը ցույց է տալիս, որ բնազանցական (մետաֆիզիկական) փիլիսոփայությունը եւ թոմիզմը արդեն վաղուց հնացած համակարգեր են[7]: 1880 թ. Բելգիայում՝ Լուվենի կաթոլիկյան համալսարանում, հիմնադրվում է փիլիսոփայության հատուկ (թոմիստական) ամբիոն, որը գլխավորում է Դեզիրե Մերսիեն (հետագայում կարդինալ)[8]: 1893 թ. այդ ամբիոնը վերափոխվում է փիլիսոփայական համալսարանի, որը գործում է մինչ օրս եւ նեոթոմիզմի կրթական գլխավոր օջախներից է: Նշանավոր աստվածաբան եւ փիլիսոփա Դեզիրե Մերսիեն նշում է, որ աստվածաբանությունը չպետք է հակադրել գիտությանը, հավատքը՝ ճանաչողությանը. մեր ճանաչողությունը սկսվում է զգայական ընկալումներով, իսկ բնազանցական հիմնադրույթները հենվում են աշխարհի ճանաչողության վրա: Մետաֆիզիկային հենակետ է հանդիսանում գիտական ճանաչողությունը: Դեզիրե Մերսիեն մեծ ներդրում ունի նեոթոմիզմի ձեւավորման եւ զարգացման գործում. նրա աշխատություններից են՝ «Տրամաբանություն», «Ընդհանուր մետաֆիզիկա եւ էություն» եւ այլն[9]: Վերոնշյալ աշխատություններում հեղինակը հստակ սահմանազատում է մասնավոր գիտությունները փիլիսոփայությունից. գիտությունը փորձում է բացատրել էմպիրիկ (փորձնական) իրականությունը, իսկ փիլիսոփայությունը, օգտագործելով վերջինիս ձեռքբերումներն ու ընդգրկելով ավելի հիմնավոր սկզբունքներ, տալիս է այդ իրականության ընդհանրական եւ առավել կատարյալ մեկնաբանությունը[10]: Այսպես՝ կենսաբանության եւ հոգեբանության արդի հայտնագործությունները օգտագործվում են հոգու գոյության հիմնահարցը լուսաբանելու համար: Դեզիրե Մերսիեն ընդգծում է, որ այնուամենայնիվ բնազանցության սկզբունքային դրույթները անկախ են գիտական հիպոթեզներից: 1894 թ. Դ. Մերսիեի գլխավորությամբ լույս է տեսնում նեոթոմիստական բովանդակությամբ ամսագիր[11]:

«Դավանաբանական սահմանադրությունից» եւ «Aeterni Patris» կոնդակից բացի նեոթոմիզմի մյուս կարեւորագույն պաշտոնական փաստաթուղթը «Թոմիստական քսանչորս թեզիսներ»-ն են, որոնք հրապարակվում են Պիոս X պապի կարգադրությամբ 1914 թ. հուլիսի 27-ին: Այս թեզիսներում ձեւակերպված են նեոթոմիզմի սկզբունքային հիմնադրույթները ըստ դրա բոլոր բաժինների՝ բնազանցության (մետաֆիզիկա), տիեզերաբանության (կոսմոլոգիա), գոյաբանության, մարդաբանության (անթրոպոլոգիա), էաբանության (օնթոլոգիա), աստվածարդարացման (թեոդիցեա)[12]:

---

6 Տե՛ս անդ, էջ 411:
7 Տե՛ս **Pawl Edwards**, The Encyclopedia of Philosophy, vol. 5, New York, 1972, էջ 476:
8 Տե՛ս **Ф. Ч. Копелстон**, Аквинат , Москва, 1999, էջ 252:
9 Տե՛ս **Р. Радев**, Критика неотомизма, Москва, 1975, с. 118.
10 Տե՛ս **J. Hastings**, Encyclopedia of Religion and Ethics, vol. 9, 1964, էջ 320:
11 Տե՛ս **Р. Радев**, նշվ. աշխ., Москва, 1975, էջ 119:
12 Տե՛ս **J. Hastings**, նշվ. աշխ., vol. 9, 1964, էջ 322:

Նեոթոմիստ տեսաբանների ուշադրությունն առաջին հերթին սևեռվում է գիտության եւ աստվածաբանության, հավատքի եւ բանականության հաշտեցման խնդրի վրա: Ամբողջ նեոթոմիստական մտակառուցման անկյունաքարը հավատքի եւ բանականության ներդաշնակ միասնության կանխադրույթն է[13]. կրոնական հավատքը եւ բանական ճանաչողությունը չեն բացառում, այլ ճիշտ գործածության դեպքում լրացնում են միմյանց: Դրանք հակոտնյաներ չեն, այլ՝ միեւնույն նպատակին տանող երկու ճանապարհներ[14]: Հավատքի աղբյուրը աստվածային հայտնությունն է, եւ անմիջականորեն այս աղբյուրից ձեռք բերված ճշմարտություններն անպայմանական են, բացարձակ: Ճանաչողության աղբյուրը մարդկային զգայություններն ու բանականությունն են, որոնք թեեւ անկատար են, բայց պետք է չանտեսվեն: Եվ՛ հավատքը, և՛ գիտությունը ձգտում են միեւնույն նպատակին. «Փիլիսոփայությունն ու աստվածաբանությունը երկու ուղղություններ են՝ մարդուց դեպի Աստված եւ Աստծուց դեպի մարդ»,- նշված է «Humani generis» կոնդակում[15]: Նեոթոմիստական իմացաբանությունը հակադրվում է սկեպտիցիզմին, պոզիտիվիզմին, սուբյեկտիվ իդեալիզմին: Նեոթոմիզմն ընդունում է մարդուց անկախ գոյություն ունեցող օբյեկտիվ իրականությունը եւ բանականության՝ ճշմարիտ եւ արժեքավոր ճանաչողությանը հասնելու կարողությունը: Իմացաբանական խնդիրներ են քննարկվել Մ. Մարեշալի «Մետաֆիզիկայի ելակետը» աշխատության մեջ, որը կրում է կանտյան փիլիսոփայության ազդեցությունը[16]: Իսկ նեոթոմիզմի հայտնի գործիչ Էտիեն Ժիլսոնը նշում է. «...պետք է ընդունել, որ բանականությունը կարող է հասնել իրականության ճշմարիտ եւ համարժեք ճանաչողության, եւ բնազանցությունը պետք է ելակետ ունենա այս հիմնադրույթը»[17]:

Տեսաբաններն արծարծում են նաեւ նեոթոմիզմի եւ մյուս փիլիսոփայական համակարգերի փոխհարաբերության հիմնահարցը: Կլայտգենն իր «Theologie der Vorzeit» հինգ հատորանոց աշխատության մեջ կանխատեսում է նաեւ արդի փիլիսոփայական ուղղությունների նկատմամբ նեոթոմիզմի դիրքորոշումը, ինչն ավելի ուշ իր արտահայտությունն է գտնում Ժակ Մարիտենի «Հակաարդիականություն» մանիֆեստում[18]:

Անհիմն է այն տեսակետը, ըստ որի նեոթոմիզմը պարզապես նույնությամբ ներկայացրել է Թոմա Աքվինացու փիլիսոփայությունը, քանզի նոր հիմնահարցերը նեոթոմիստներից բոլորովին այլ մոտեցումներ էին պահանջում: Իսկ բնազանցության վերաբերյալ նեոթոմիզմի տեսակետը հետեւյալն է. «Ճիշտ չէ կարծել, թե մետաֆիզիկան եւ գիտությունը հոմանիշներ են, եւ եթե գիտությունն առաջընթաց է ապրում, փոփոխվում է, ապա մետաֆիզիկան եւս պետք է փոփոխություններ կրի: Մետաֆիզիկան անդրադառնում է օբյեկտիվ աշխարհի իրերին ու երեւույթներին, որոնք ուղղակիորեն համարվում են «գոյավորներ»՝ էությամբ անփոփոխ մնացող, անկախ այն բանից, թե գիտնականներն ինչպիսի հայտնագործություններ են կատարում եւ ինչ նոր տեսություններ են առաջադրում»[19]: Անժխտելի է, որ բնա-

13 Տե՛ս **В. И. Гараджа**, Неотомизм-разум-наука, Москва, 1969, էջ 20:
14 Տե՛ս "Христианство", Москва, том 3, 1995, էջ 132:
15 **Р. Радев**, նշվ. աշխ., с.18.
16 **Ф. Ч. Копелстон**, Аквинат, с.256.
17 Տե՛ս **В. И. Гараджа**, Неотомизм-разум-наука, Москва, 1969, էջ 42:
18 Տե՛ս **Ф. Ч. Копелстон**, նշվ. աշխ., էջ 254-258:
19 Տե՛ս **J. Owens,** St. Thomas and the Future of Metaphysics, Milwaukee, 1957, էջ 19:

զանցությունն իր քննարկումներն ու մեկնաբանությունները պետք է հարմարեցնի արդի մտածողությանը եւ աշխարհայացքին՝ իր էությունը նույնությամբ պահպանելով: Այսպես՝ Թոմա Աքվինացու առաջադրած «Աստվածային Կեցության գոյության ապացույցներ»-ը ժամանակի ընթացքում համալրվեցին պատմական, հոգեբանական, ընկերաբանական եւ այլ ապացույցներով[20]: Ֆ. Գ. Բրեդլին փաստում է, որ Աստծո գոյության ապացույցները ոչ թե փորձնականից (էմպիրիկ) անդրանցականին (տրանսցենդենտ), վերջավորից հավերժականին անցման թռիչք են, աստվածաճանաչողությունն ակնհայտ դարձնող միջոցներ են. քանզի դրանք ընգծում են էմպիրիկ (փորձնական) իրականության այն իրողությունները, որոնք ուղեցույցի դեր են կատարում բնազանցական խորհրդածությունների համար[21]:

Կաթոլիկ փիլիսոփաները կարեւորում են ընկերաբանությանը եւ քաղաքագիտությանը վերաբերող տեսակետների արդիականացումն ու վերամշակումը՝ արժեւորելով անհատի դերը հասարակական կյանքում: Այս բնագավառում մեծ է Ժակ Մարիտենի ներդրումը: Նա վերականգնեց ու առավել խորացրեց թոմիստական ավանդույթները եւ քննարկելով արդի հասարակական-քաղաքական համակարգերը՝ արժեւորեց մարդկային կյանքի հոգեւոր եւ բարոյական ոլորտները[22]:

Չ. Կոպոլստոնը նշում է, որ նեոթոմիզմը օբյեկտիվ աշխարհի քրիստոնեական բացատրությունն է կամ այլ խոսքերով՝ քրիստոնեության կոնտեքստում էմպիրիկ իրականությունը գոյաբանական մակարդակում ըմբռնելու փորձ: Ըստ վերոնշյալ հեղինակի նեոթոմիզմը փիլիսոփայական ներդաշնակ համակարգ է, որը ներառում է եւ էմպիրիկ, եւ ռացիոնալիստական տարրեր[23]:

Այսպես՝ նեոթոմիստները խորապես վստահում են բանականությանը, սակայն միեւնույն ժամանակ ընդգծում, որ բանականության կարողությունները նույնպես սահմանափակ են. «Աստված իզուր չէ բանականության լույսով օժտել մարդուն: Սակայն, որպես վերջավոր էակի կարողություն, բանականությունն էլ վերջավոր եւ սահմանափակ է: Ազատ կամքով օժտված մարդու բանականությանը ամեն ինչ չէ, որ հասանելի եւ մատչելի է»[24]:

Որոշ փիլիսոփայական ուղղությունների ներկայացուցիչներ մատնանշում են, որ թոմիստական «հավերժական փիլիսոփայության» թեզիսը ինքնին բացառում է զարգացումը, առաջընթացը: Սակայն նեոթոմիստ տեսաբանները «հավերժական փիլիսոփայություն» ասելով նկատի ունեն, որ փոփոխվող եւ զարգացող իրերի աշխարհում մշտապես գոյություն ունեն փաստվող եւ հիմնավորվող բնազանցական հիմնադրույթներ[25]: Բացի այդ, երբ նեոթոմիստ մտածողները պնդում են, թե թոմիզմը «հավերժական փիլիսոփայություն» է նրանք ամենեւին չեն բացառում ճշմարտության հայտնաբերման, բացահայտման այն ուղիները, որոնք առաջարկում են մյուս փիլիսոփայական դպրոցների ներկայացուցիչները: Ըստ Չ. Կոպոլստոնի նեոթոմիզմը արդիական, ինքնատիպ հայացքների, գաղափարների, խորաթափանց սկզբունքային դրույթների համակարգ է, որն օգտագործում է գիտությունների նոր

20 Տե՛ս "Five ways; St. Thomas Aquinas' proofs of Gods' Existence" , London, 1969, էջ 36:
21 Տե՛ս **Ф. Ч. Копелстон,** նշվ. աշխ., էջ 260:
22 Տե՛ս **P. Edwards,** The Encyclopedia of Philosophy, vol. 7, New York, 1972, էջ 110:
23 Տե՛ս **Ф. Ч. Копелстон,** նշվ. աշխ.,էջ 264:
24 **В. И. Гараджа,** Неотомизм-разум-наука, с.26.
25 Տե՛ս **Meyer Hans,** The Philosophy of St. Thomas Aquinas, Chicago, 1953, էջ 28:

փվայալներն ու հայտնագործությունները: Սակայն որպեսզի «հավերժական փիլիսոփայության» թեզիսը պահպաներ իր իմաստը, նեոթոմիստները պետք է անփոփոխ պահեին որոշ սկզբունքային դրույթներ եւ մոտեցումներ[26]:

Նեոթոմիզմը փորձում է հաղթահարել նաեւ մատերիալիզմի եւ իդեալիզմի ծայրահեղ դրսեւորումները: Այն բնութագրվում է որպես միասնական, տրամաբանորեն հիմնավորված եւ կայուն փիլիսոփայական համակարգ:

Նեոթոմիստ տեսաբաններն իրենց փիլիսոփայությունը սահմանում են «Կեցության եւ մտքի փիլիսոփայություն», քանզի վերջինս իր համակարգում ներառում է «անանց ճշմարտություններ», որոնք առաջնորդում են դեպի Հավերժական Է-ն: Նեոթոմիզմը զարգացնում է մետաֆիզիկան եւ օնթոլոգիան եւ այս իմաստով հանդես է գալիս որպես «Կեցության ու գոյի մասին փիլիսոփայություն»[27]: Բնազանցությունը աստվածաբանության եւ փիլիսոփայության հիմքն է, որը փորձում է հասնել Կեցության բացահայտմանը: Ըստ Ժակ Մարիտենի, բնազանցությունը պետք է տարբերել այսպես կոչված «բնության փիլիսոփայությունից», որի ուսումնասիրության առարկան բնագիտության ընդհանուր հիմնահարցերն են[28]: Նա գրում է. «Մետաֆիզիկան գիտական ճանաչողություն է, որը բանականության լույսի ներքո դիտարկում է բոլոր իրերի «առաջին պատճառը»: Այն հասնում է «հավիտենական իրերի» բացահայտմանը, դիտարկում է Կեցության դրսեւորումները»[29]: Ինչպես Թոմա Աքվինացին, նույնպես եւ նեոթոմիստները նշում են, որ ողջ բնազանցությունը փորձում է հասնել աստվածային Կեցության բացահայտմանը: Բայց, քանի որ Աստված դուրս է բնական, առօրյա փորձնականության սահմաններից, ուստի Աստծուն ինչ-որ չափով կարող ենք ճանաչել միայն դիտարկելով եւ ճանաչելով նրա արարչագործությունը: Այն տեսությունը, թե աշխարհը ժամանակի մեջ սկիզբ ունի, պաշտպանվում է կաթոլիկ աստվածաբանների կողմից եւ լիովին համապատասխանում է գիտական նորագույն փաստարկներին: Ըստ նեոթոմիստ տեսաբանների, եթե նույնիսկ հնարավոր լիներ ապացուցել, որ աշխարհը ժամանակի մեջ սկիզբ չունի, սա ամենեին չէր նշանակի, թե այն արարված, ստեղծված չէ: Քանզի իրերի աշխարհը կարող է միայն գոյություն ունենալ «բացարձակ, անհրաժեշտ Կեցության» շնորհիվ[30]: Այն, թե աշխարհը ստեղծվել է «ոչնչից»՝ չի նշանակում, որ աշխարհն արարվել է «ոչնչից» հետո: Լուվենի համալսարանի հայտնի նեոթոմիստները մատնանշում են, թե նյութական կեցության ողջ բազմազանությունն արարվել է Աստծո կողմից արարված պոտենցիալ նախահիմքից՝ «նախանյութից» հետո[31]: Այսինքն՝ աշխարհի ստեղծումը դեռեւս արարչագործության սկիզբը չէ: Նեոթոմիստներն ընդգծում են նաեւ, թե ժամանակն ու տարածությունն արարվել են նախքան նյութը եւ դրանից անկախ: Նեոթոմիստական մետաֆիզիկայով եւ գոյաբանությամբ մերժվում է այն տեսակետը, ըստ որի մատերիան (նյութը) «հավիտենակից» է Աստծուն, եւ Արարիչը միայն նյութից ձեւավորել է գոյություն ունեցող աշխարհը: Նյութը եւս արարված է եւ ժամանակի մեջ սկիզբ ունի: Լեւոն XIII պապի

26 Տե՛ս **Ф. Ч. Копелстон,** նշվ. աշխ.,էջ 262-266:
27 Տե՛ս **J. Owens,** An Elementary Christian Metaphysics, Milwaukee, 1963, էջ 144:
28 **Р. Радев,** նշվ. աշխ., с.277.
29 **J. Wippel,** Metaphysical themes in Thomas Aquinas, Washington, 1984, p. 17.
30 **Б. Л. Губман,** Современная католическая философия, Москва, 1988, с.16-20.
31 Տե՛ս **J. Owens,** An Elementary Christian Metaphysics, Milwaukee, 1963, էջ 144-150:

«Aeterni Patris» կոնդակում նշված է. «...բոլոր իրերն արարվել են «ոչնչից» Աստծո ամենակարող զորությամբ, դրանք գոյություն ունեն Աստծո բանականության շնորհիվ եւ շարժման մեջ դրվում, ուղղորդվում են դրանցից յուրաքանչյուրի համար նախասահմանված նպատակին»[32]:

Կաթոլիկ Եկեղեցին հսկայական ներդրում ունի ինչպես նեոթոմիզմի ձեւավորման, այնպես եւ հետագա տարածման գործում: Այսօր նեոթոմիզմը տարածված է աշխարհի շատ երկրներում եւ մեծ հեղինակություն է վայելում: Կաթոլիկության եւ նեոթոմիզմի միջեւ գոյություն ունեցող սերտ կապն անժխտելի է, սակայն կան նշանավոր փիլիսոփաներ, որոնք իրենց տեսակետներով հարում են նեոթոմիզմին, բայց դավանանքով կաթոլիկ չեն:

Այսպես՝ հայ իրականության մեջ նեոթոմիստական տեսակետներին է հարում նշանավոր մտածող Շահան Պերպերյանը: Չնայած նա ինչ-որ չափով կրում է նեոթոմիզմի ազդեցությունը, սակայն առաջադրելով սեփական տեսակետներն ու սկզբունքները եւ տալով դրանց հիմնավոր բացատրությունները՝ երբեմն նույնիսկ գերազանցում է նեոթոմիստ տեսաբաններին: Շահան Պերպերյանը ճշմարտացիորեն նկատում է, որ Աստծո գոյության հիմնախնդիրը մշտապես հուզել է մարդկությանը: Այս հիմնախնդրի լուծմանը կարող ենք հասնել տիեզերքի, աշխարհի, մեզ ընկալելի եւ հասկանալի բնական երեւույթների եւ օրենքների ճանաչողության եւ դիտարկման միջոցով: Օբյեկտիվ իրականության մեջ բանականության միջոցով հայտնաբերում ենք այնպիսի իրողություններ, որոնք ստիպում են անդրանցնել փորձնական (էմպիրիկ) իրականությունը եւ խորհրդածել աստվածային Կեցության մասին[33]: Այսպես՝ գիտության կողմից առաջադրված բարեշրջական (evolutionniste) տեսությունը նա օգտագործում է Աստծո գոյությունը հիմնավորելու համար: Որոշ տեսաբաններ պնդում են, թե բարեշրջական տեսությունը հակադրվում է աստվածաբանությանը: Իսկ Շահան Պերպերյանը նշում է, որ այդ տեսության միջոցով բացահայտվում է աշխարհում կյանքի աստիճանական զարգացումը, ինչպես եւ այն, որ այդ զարգացման գագաթնակետը մարդ արարածն է: Այս ամենը ոչ թե մերժում, այլ հիմնավորում են արարչագործության մասին Աստվածաշնչում գրվածը[34]: Իր «Բնազանցություն» գրքում Շահան Պերպերյանը ներկայացնում է Աստծո գոյության կրոնական, փիլիսոփայական, վախճանաբանական, անհատական փորձառության ապացույցները, որոնք մեկ անգամ ես փաստում եւ հիմնավորում են քրիստոնեական դոգմաները: Մեր մեթոդը, ըստ Շահան Պերպերյանի, պետք է լինի աշխարհում որոշակի իրողություններին հետեւելը. դրանք կարծես «ուղիներ» են, որոնց հետեւելով անդրանցնում ենք տիեզերքը եւ անհրաժեշտորեն հանգում Բացարձակ Կեցության գոյությանը: Թեեւ Աստծո գոյությունը փաստող իրողությունները գտնվում եւ հայտնաբերվում են տիեզերքի սահմաններում, սակայն վկայում են տիեզերքից վեր գտնվող, անդրգոյ Է-ի մասին, եւ կարծես թե Նրա «հետքերն» են իրերի աշխարհում[35]:

ԺԹ եւ Ի դարերից մինչ օրս նեոթոմիզմը զարգացել եւ կատարելագործվել է՝ ներառելով նորանոր մոտեցումներ եւ հիմնադրույթներ: Նեոթոմիզմի համապարփակությունը բացատր-

32 **В. Ражков,** Очерки по истории римско-католической Церкви, Москва, 1999, с.81.
33 Տե՛ս **Շահան Պերպերեան,** Բնազանցութիւն, Բէյրութ, 1978, էջ 126:
34 Տե՛ս անդ, էջ 68-69:
35 Անդ, էջ 128:

վում է փիլիսոփայական արժեքավոր ժառանգության ընդգրկմամբ[36]: Դա ոչ թե ուսմունք է, որը ներառելով որոշակի սկզբունքներ՝ սահմանափակվում է հարցերի նեղ շրջանակով, այլ՝ փիլիսոփայական համակարգ իր բազում բաժիններով: Այն համընթաց է գիտական եւ հասարակական զարգացմանը, հանդես է գալիս որպես «փիլիսոփայական բաց համակարգ», որը մշտապես գտնվում է առաջընթացի մեջ եւ պատրաստ է ընդգրկել գիտական նորագույն հայտնագործություններն ու փվյալները[37]:

Կաթոլիկ Եկեղեցին հսկայական ներդրում ունի նեոթոմիզմի սկզբնավորման, հետագա զարգացման ու տարածման գործում[38]: Նեոթոմիստների առաջին կոնգրեսը հիմնադրվում է 1925 թ.: Կաթոլիկյան ուսումնական հաստատությունների եռանդուն գործունեության շնորհիվ այն արագորեն տարածվում է աշխարհի տարբեր երկրներում: Առավել ազդեցիկ գերմանացի նեոթոմիստը, որը Ի դարի առաջին կեսին շարունակեց Կլայտգենի գործը, Մյունստերի եւ Ֆրայբուրգի համալսարանների պրոֆեսոր Յոզեֆ Հայզերն է (1869-1948 թթ.): Իր ուսմունքը Յոզեֆ Հայզերը Հուսեռլի ոճով անվանել է «էյդոլոգիա»[39]: Նեոթոմիզմը Գերմանիայում մեծ տարածում է գտնում հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո: Այս շրջանում էլ նեոթոմիստ նշանավոր գործիչները շարադրում են մի շարք արժեքավոր աշխատություններ՝ Մարտին Գրաբմանը գրում է երկու հատորանոց «Սխոլաստիկական մեթոդի պատմություն»-ը, Յոզեֆ Ֆրիզը մեծ ներդրում է կատարում իմացաբանության բնագավառում՝ հեղինակելով «Միտք եւ կեցություն» աշխատությունը: Այժմ Գերմանիայում նեոթոմիզմի տեսական կենտրոնը Պուլահի դպրոցն է, որի անդամները գիտա-փիլիսոփայական աշխույժ գործունեություն են ծավալում[40]:

Ֆրանսիայում՝ Փարիզում, Լիոնում, Տուլուզում նեոթոմիզմի տարածմանը նպաստում է Փարիզի կաթոլիկյան համալսարանը:

Իտալիայում նեոթոմիզմը տարածում են հեղինակավոր մտածողներ Ա. Ջեմելլին եւ Դ. Կապելլոնը: Ապա Միլանի համալսարանի փիլիսոփայության պատմության պրոֆեսոր Ֆ. Օլդժատին նոր ազդակ է հաղորդում նեոթոմիզմի հետագա զարգացմանը:

Նեոթոմիզմն առավել դժվարությամբ է տարածվում Անգլիայում. քրիստոնեական փիլիսոփայությունը հետաքրքրություն առաջացնում եւ տարածվում է հատկապես 1945 թվականից հետո, ինչն էլ կարելի է բացատրել հասարակական նոր տրամադրություններով[41]:

Նեոթոմիզմի մետաֆիզիկան

Նեոթոմիստական փիլիսոփայական համակարգի էությունն առավել ընդգծված է նրա օնթոլոգիայում (էաբանություն): Որոշ հիմնախնդիրների տրված ինքնուրույն լուծումներն ամբողջական պատկերացում են տալիս նեոթոմիզմի մասին: Այս ուղղության ներկայացուցիչները պայքարում են հակամետաֆիզիկական ձգտումների դեմ եւ հիմնավորում, որ մարդ-

36 Տե՛ս **Р. Радев**, նշվ. աշխ., էջ 130:
37 Տե՛ս **P. Edwards,** The Encyclopedia of Philosophy, vol. 7, New York, 1972, էջ 111:
38 Տե՛ս "Христианство", том.3, Москва, 1995, էջ 133:
39 Տե՛ս "История философии", том.6, Москва, 1965, էջ 185:
40 **Р. Радев,** Критика неотомизма, Москва, 1975, с.121-122.
41 Տե՛ս «Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ», Եր., 1979, էջ 918:

կությանն անհրաժեշտ է նոր փիլիսոփայական համակարգ, որի հիմնական բովանդակային խնդիրները կլինեն էաբանական եւ գոյաբանական հիմնահարցերը: Ըստ Ժակ Մարիտենի՝ մետաֆիզիկան ընդհանրական իմաստով հենց իմաստասիրությունն է: Մետաֆիզիկայից պետք է տարբերել այսպես կոչված «բնության փիլիսոփայությունը» [42]: Մետաֆիզիկան ներառում է երկու բաժին՝ ընդհանուր մետաֆիզիկա եւ մասնավոր մետաֆիզիկա (Աստծո եւ հոգու գոյության մասին):

Դեռեւս Թ-ովմա Աքվինացին ընդգծում էր մետաֆիզիկայի անկախությունը գիտական փորձնական դրույթներից: Այսպես՝ գիտական առաջընթացն ամենեւին չի ժխտում Աստծո գոյության ապացույցները[43]: Նեոթոմիստները սահմանազատում են մասնավոր գիտությունները մետաֆիզիկայից: Դա չի նշանակում գիտական տվյալների մերժում. յուրաքանչյուր մասնավոր գիտություն հետազոտում է օբյեկտիվ իրականության այս կամ այն իրողությունը եւ դրանք ղեկավարող օրենքները, իսկ մետաֆիզիկան օբյեկտիվ աշխարհի իրերն ու երեւույթները դիտարկում է գոյաբանական մակարդակում[44]: Հակադրվելով Ռ. Ռադեի ծայրահեղ քննադատությանը՝ նշենք, որ նեոթոմիստական մետաֆիզիկայի «անփոփոխությունը» բացատրվում է էաբանության եւ գոյաբանության բովանդակային անփոփոխությամբ[45]: Նեոթոմիստները մերժում են նյութի սուբստանցիոնալ ըմբռնումը՝ մատերիան համարելով կրավորական, արարչագործված. նրանց մետաֆիզիկայում գլխավոր տեղը զբաղեցնում է սուբստանցիայի (սուբստրատի իմաստով) միակության սկզբունքը, որով էլ հիմանվորվում է Աստծո գոյությունը:

Ժակ Մարիտենը գրում է, որ լավ փիլիսոփա լինելու համար պետք է ծանոթ լինել մետաֆիզիկայի պատմությանը: Նեոթոմիզմը փիլիսոփայական միտքն ուղղորդում է դեպի բնազանցական հիմնախնդիրները: Փիլիսոփայությունը ներկայացվում է որպես համապարփակ համակարգ, իսկ մետաֆիզիկան փիլիսոփայական մտածողության հիմքն է: Նեոթոմիզմը զարգացնում է մետաֆիզիկան կամ «կեցության փիլիսոփայությունը», ինչպես նաեւ օնթոլոգիան ու գոյաբանությունը: Մետաֆիզիկայում որոշակիորեն տարբերակվում են ինքնին վերցրած «կեցությունը» (esse) եւ «գոյությունը» (ens)[46]: Բացարձակ, անեղ, հավերժական կեցությունը հենց Աստվածն է, որից կեցություն են ստանում բոլոր արարված, վերջավոր իրերը: Բացարձակ Կեցության գոյաբանությունը միայն բանականությամբ հնարավոր չէ լիովին ճանաչել: Վատիկանի առաջին տիեզերաժողովի ձեւակերպմամբ՝ «...այդ Կեցությունն աշխարհից տարբեր եւ անփոփոխ «ոգեկան սուբստանցն» է: Կեցությունն աստվածային սուբստանցի բուն էությունն է»[47]: Նեոթոմիստական մետաֆիզիկան վերլուծում է «այն ինչ կա» եւ այս դեպքում լայնորեն օգտագործում է «էություն» (essentia) եւ «գոյություն» (existentia) եզրույթները: Այս երկատումն իմաստ ունի այն դեպքում, երբ վերաբերում է արարված, վերջավոր իրերին, որոնցում տարբերակվում եւ զուգորդվում են «էությունն» ու «գոյությունը»: «Հնարավորը» (պոնտենցիան) ներկայացվում է որպես մի «էութ-

42 Տե՛ս **J. F. Anderson**, An Introduction to the Metaphysics of St. Thomas Aquinas, Chicago, 1953, ¿Ջ 28:
43 Տե՛ս **Ф. Ч. Копелстон**, Аквинат, Москва, 1999, էջ 78:
44 Տե՛ս **P. Edwards,** The Encyclopedia of Philosophy, vol. 7, New York, 1972, p. 111:
45 Տե՛ս **Р. Радев**,նշվ. աշխ., էջ 281:
46 Տե՛ս **J. Owens**, An Elementary Christian Metaphysics, Milwaukee, 1963, էջ 148:
47 "Христианство", том 1, Москва, 1955, с. 348.

յուն», որը դեռ օժտված չէ գոյությամբ: Օժտված լինել «էությամբ», այսինքն՝ լինել այս կամ այն որոշակի իրը, նշանակում է լինել սահմանափակ, վերջավոր, լինել ոչ թե կեցություն որպես այդպիսին, այլ՝ մի որոշակի կեցություն: Եթե կեցությունը հաստատում է դրական (պոզիտիվ) սկիզբը, ապա «էությունը» կեցության սահմանպակումն է[48]: Իրերի աշխարհում եղած կեցությունն էապես տարբեր է ասպվածային Կեցությունից. վերջինիս մեջ չկա «էության» եւ «գոյության» տարբերություն, քանի որ նրանում չկա կեցության սահմանափակում: Բացարձակ Կեցության մեջ «էությունն» ու «գոյությունը» միացած չեն մեկ ամբողջի մեջ ինչպես վերջավոր իրերում, այլ ի սկզբանե նույնական են[49]:

Այսպիսով՝ նեոթոմիստական մետաֆիզիկայի եւ գոյաբանության հիմքում ընկած է «առաջին, բացարձակ Կեցության» եւ նրանից ածանցյալ, նրա կողմից արարված «իրերի աշխարհի» ըմբռնումը: Փաստորեն, նեոթոմիզմը ընդունում է «ոգեկան Սուբստանցի» գոյությունը, որը կապված չէ մատերիայի հետ եւ նյութական աշխարհի սահմաններից դուրս է գտնվում: Նշենք, որ որոշ նեոթոմիստ փիլիսոփաների՝ Պ. Լուրցի, Կ. Ֆաբրոյի կարծիքով ոգեկան Կեցության՝ «բացարձակ կատարելության» մեջ արդեն թաքնված, «նախակերպավորված» է նյութական աշխարհի ողջ առարկայական բազմազանությունը: Իսկ նյութական աշխարհի շրջանակներում ոգեկանի եւ նյութականի փոխհարաբերության խնդիրը լուծվում է մետաֆիզիկական հիլեմորֆիզմի (հին հունարենից բառացիորեն թարգմանվել է «հյուլեձեւություն») սկզբունքով, որը նեոթոմիստական փիեզերաբանության հիմքն է[50]: Այս ուսմունքի համաձայն, գոյություն ունեցող իրերի երկմիասնությունը չի սպառվում նրաց կեցությամբ եւ սահմանափակիչ էությամբ: Իսկ էությունն իր հերթին դիտվում է որպես «մատերիայի» եւ «ձեւի» երկմիասնություն: Էության համեմատությամբ «մատերիան» եւ «ձեւը» համարժեք են «հնարավորությանը» եւ «իրականությանը»: Այսպես՝ մատերիա (նյութ) ասելով ենթադրվում է ներգոր (պոտենցիալ) էությունը, իսկ «ձեւ» ասելով՝ առկա (ակտուալ), իրողություն դարձած էությունը[51]: Առաջինը կրավորական բնույթ ունի, երկրորդը՝ գործուն: Միեւնույն ժամանակ նեոթոմիստները զգուշացնում են, որ «ձեւի» եւ «մատերիայի» սուբստանցիոնալ ըմբռնումները սխալ են:

Նեոթոմիստական մետաֆիզիկայում կարեւոր տեղ է զբաղեցնում «կեցության համանմանության» կամ «գոյավորի համանմանության» (analogia entis) ուսմունքը: Աստծո գոյությունը մարդը կարող է միայն բացահայտել Արարչի կողմից արարված իրերի աշխարհը, բնական օրինաչափությունները ճանաչելու միջոցով: Եթե մասնավոր գիտությունն ուսումնասիրում է այս կամ այն բնագավառը, ապա մետաֆիզիկան, հիմնվելով գիտության հայտնաբերած փաստերի եւ օրինաչափությունների վրա՝ փորձում է ապացուցել Բացարձակ Կեցության գոյությունը: Աստվածիմացությունը հատուկ տեսակի ճանաչողություն է՝ ոչ թե ադեկվատ ճանաչողություն, այլ ճանաչողություն ըստ համանմանության (անալոգիայի): Կեցությունները տարբեր են լինում. վերջավոր կեցությունը նույնական չէ անվերջին: Երբ որեւէ իրի մասին ասում ենք՝ «այն կա», ապա դա նույնը չէ, ինչ մենք նկատի ունենք՝ պնդե-

48 Տե՛ս **J. Owens,** St. Thomas and the Future of Metaphysics, Milwaukee, 1957, ¿Ç 34:
49 Տե՛ս **Ф. Ч. Копoлстон,** նշվ. աշխ., էջ 105:
50 Տե՛ս **Р. Радев,** նշվ. աշխ., էջ 312:
51 Տե՛ս **П. Тиллих,** Систематическое Богословие, Санкт-Петербург, 1998, էջ 58:

լով, որ «Աստված կա»: Այն ամենի մասին, ինչ վերաբերում է Աստծու կեցությանը, մենք կարող ենք դատել միայն ճանաչելով նյութական աշխարհը եւ համանմանության մեթոդը կիրառելով: Բացարձակ Կեցության եւ գոյություն ունեցող իրերի միջեւ կա անհրաժեշտ ընդհանրություն, քանի որ նյութական աշխարհն իր ողջ բազմազանությամբ արարվել է Աստծո կողմից: Բայց Աստծո մասին ձեռք բերված մարդկային գիտելիքները ուղղակի եւ համարժեք (conceptus proprius) չեն, այլ միշտ մնում են համանմանական, սահմանափակ[52]: Աստվածային կեցությունը չենք կարող լիովին ճանաչել, միայն կարող ենք հիմնավորել Աստծո գոյությունը՝ դիտարկելով արարված աշխարհը եւ հայտնաբերելով բացարձակ Մտքի «հետքերը» իրերի աշխարհում:

Ըստ նեոթոմիստների տիեզերաբանությունը մետաֆիզիկական ինքնատիպ ուղեցույց է, քանզի իրերի աշխարհի որոշարկումները ենթադրում են կեցության եւ սուբստանցիայի բնույթը: Ելակետային է արարչագործման (կրեացիոնիզմ) սկզբունքը: Արարչագործությունը հասկացվում է ոչ թե որպես ձեւավորում, կազմավորում, այլ որպես «արարում (ստեղծում) ոչնչից»[53]: Դեռեւս Թոմա Աքվինացին նշում էր, որ «նախանյութը» Աստծո կողմից արարված կրավորական նախահիմքն է, ուստի «լինել» նշանակում է լինել արարված, կեցություն ստացած: Աշխարհի արարման հետ է կապվում նաեւ ժամանակի հիմնահարցը. ժամանակը, ինչպես եւ գոյության յուրաքանչյուր ձեւ, արարվել է Աստծու կողմից, որը ժամանակից դուրս է, անփոփոխ ու հավերժական[54]: Արարված աշխարհը Աստծու լավագույն ստեղծագործությունն է, որը ժամանակի եւ տարածության մեջ սահմանափակ է: Բացարձակ Կեցությունը ոչ միայն արարել է աշխարհը, այլ նաեւ «ներդաշնակություն» եւ «կարգավորվածություն» է հաղորդել իր ստեղծագործությանը[55]:

Վերոհիշյալ հիմնախնդիրների վերաբերյալ իր տեսակետներն է արտահայտել Շահան Պերպերյանը: Վերջինս «մետաֆիզիկայի» փոխարեն օգտագործում է «բնազանցություն» եզրույթը: Իր «Բնազանցություն» աշխատության մեջ նա գրում է. «...բնազանցությունն անդրանցնում է վերջավոր իրերի աշխարհը եւ իր ուսումնասիրության առարկան դարձնում բուն իսկ էությունը»[56]: Շահան Պերպերյանը նշում է, որ դեռեւս Արիստոտելը բնազանցությունը սահմանել է որպես «առաջին պատճառների եւ վերջին նպատակների գիտություն»:

Բնազանցությունը կարելի է անվանել նաեւ ընդհանուր իմաստասիրություն՝ այն զատորոշելու մասնավոր իմաստասիրական համակարգերից: Բնազանցության համակարգում իր ուրույն տեղն է զբաղեցնում իմացության արժեւորման խնդիրը: Ըստ Շահան Պերպերյանի բնազանցությունն ուղղակիորեն կապված է ճանաչողության արժեւորման խնդրի հետ, քանզի մետաֆիզիկայի ողջ համակարգը կառուցվում է՝ հիմնվելով վստահելի, ճշմարիտ ճանաչողության վրա: Աստծո գոյության խնդիրը բոլոր ժամանակներում եղել է փիլիսոփայական հիմնահարցերի գագաթնակետը: Նախապես գիտական ճանաչողության եւ ապա առավել խորաթափանց կոսմոլոգիայի (տիեզերաբանության) միջոցով հանգում ենք

52 “Истопия философии”, Москва, 1965, с. 187-190.
53 **Б. Л. Губман**, Современная католическая философия, Москва, 1988, с. 16.
54 Տե՛ս **А. Ф. Лосев,** Бытие-имя-космос, Москва, 1993, էջ 65-68:
55 Տե՛ս **F. Ferre,** Basic modern philosophy of Religion, New York, 1967, էջ 27:
56 **Շահան Պերպերեան,** Բնազանցութիւն, էջ 7:

աշխարհը ստեղծող, բայց անստեղծ Աստծո գաղափարին[57]: «Բնազանցություն» աշխատության մեջ հատկապես հետաքրքիր է վախճանաբանական հարցերը քննարկող հատվածը: Շահան Պերպերյանը վախճան բառի երկու իմաստ է առանձնացնում՝ «նպատակ» եւ «վերջ, ավարտ», ըստ այդմ վախճանաբանությունը բաժանում է երկու բաժնի: Վախճանաբանությունը (նպատակ իմաստով) աշխարհում հայտնաբերում է համընդհանուր նպատակայնություն, քանզի բոլոր իրերն ու երեւույթները իրենց գոյությամբ ձգտում են ինչ-որ որոշակի նպատակի: Եւ մենք վերջ ի վերջո հանգում ենք նպատակադիր բացարձակ Մտքի գաղափարին: Վախճանաբանությունը (ավարտ, վերջ) իմաստով ունի քննարկման երկու բնագավառ: Շահան Պերպերյանը նշում է, որ նախապես պետք է քննարկել յուրաքանչյուր էակի վախճանի խնդիրը եւ փորձել պարզել՝ մարմնական մահը գոյության ավարտն է, թե ոչ: Ահա այստեղ է ծագում «հոգու անմահության» հիմնախնդիրը[58]: Իսկ ամենավերջում պետք է քննել ողջ տիեզերքի գոյության ավարտի հիմնահարցը: Ըստ Շահան Պերպերյանի իմաստասիրությունը մարդկային մտքի գերագույն ճիգն է, որը փորձում է հասնել այս խնդիրների բացահայտմանն ու պարզաբանմանը: Շահան Պերպերյանի տեսակետները խորաթափանց են եւ հիմնավորված, իսկ նրա «Բնազանցություն» աշխատությունը փիլիսոփայական փայլուն մտքի դրսեւորման արգասիք է:

Նեոթոմիզմը վճռական հակահարված հասցրեց աթեիզմին, պրագմատիզմին, սկեպտիցիզմին եւ նորագույն փիլիսոփայական համակարգերին՝ ամրապնդելով քրիստոնեության տեղը եւ հիմնավորելով քրիստոնեական դավանաբանությունը, չնայած ուներ որոշակի թերություններ, ինչպես եւ ցանկացած փիլիսոփայական ուղղություն:

57 Տե՛ս անդ, էջ 8-10:
58 Տե՛ս անդ, էջ 10-12: